ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 դեկտեմբերի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

178
(3209)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԱԾ ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐԸ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները ՀՀ քննչական կոմիտեից հայտնում են, որ ԱԱԾ նախկին տնօրեն, ԱԱԾ Քննչական դեպարտամենտի ղեկավար Միքայել Համբարձումյանին հրավիրել են հարցաքննության՝ Նորքի զինված խմբին առնչվող քրեական գործով. ընդ որում՝ առերես հարցաքննության:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ըստ նախաքննական մարմնի՝ դեռեւս 2015-2016 թվականներին Նորքի զինված խմբի առանձին անդամների նկատմամբ ԱԱԾ-ում ճնշում է գործադրվել, որի արդյունքում էլ տրվել են խմբին մերկացնող ցուցմունքներ: Ու քանի որ այդ ժամանակ Միքայել Համբարձումյանը ԱԱԾ քննչական դեպարտամենտի ղեկավարն էր, նրան են հրավիրել հարցաքննության:

«Ժողովուրդը» այս առիթով հարց ուղղեց նաեւ Միքայել Համբարձումյանին՝ խնդրելով մեկնաբանել մեր տեղեկությունները, սակայն վերջինս ընդամենը փաստեց, որ ուրախ է, որ դեռեւս կան ազնիվ մարդիկ, ովքեր անձնական կամ այլ շահերով պայմանավորված չեն գնում զրպարտության, ստի:

Այս պատասխանից կարող ենք հանգել այն հետեւությանը, որ այնուամենայնիվ մեր տեղեկությունները ճիշտ են, եւ կատարվել է առերես հարցաքննություն, որի ընթացքում տրվել են Միքայել Համբարձումյանի վերաբերյալ մեղքը ժխտող ցուցմունքներ, ինչով էլ պայմանավորված՝ նա փաստում է այդ անձանց ազնվության մասին...

Սա պատվե՞ր է Միքայել Համբարձումյանի նկատմամբ՝ ինչ-որ շրջանակներից ուղղորդվող, թե՞ պարզապես ստուգման օբյեկտիվ գործընթաց. այս պահին դժվար է հետեւություն անել: Թերեւս պետք է սպասել հետագա զարգացումներին:

Հ.Գ. «Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի 13.01.2026-ին:



Համապետական ընտրություններին ընդառաջ քաղաքական դաշտում ակտիվացել են տարբեր ուժերի միջեւ հանդիպումներն ու քննարկումները: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել է, որ մի շարք քաղաքական ուժեր արդեն իսկ ունեցել են համատեղ քննարկումներ՝ հնարավոր համագործակցության եւ օրակարգային հարցերի շուրջ: Խոսքը վերաբերում է «Հայ ազգային կոնգրես» կուսակցությանը, «Նժար» շարժմանը, «Սասնա ծռեր» կուսակցությանը, «Հաղթանակ» կուսակցության առաջնորդ, քաղաքային պլանավորող Վիկտոր Մնացականյանին, «Ապրելու երկիր» կուսակցությանը: Այս տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատեց «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանը՝ նշելով, որ քննարկումները կրել են բաց եւ հրապարակային բնույթ: «Նշված ուժերի կողմից մի քանի անգամ կազմակերպվել են քննարկումներ, որոնց մեր թիմակիցներն իրենց մասնակցությունն ունեցել են: Քննարկումները եղել են հրապարակային՝ տարբեր թեմաների շուրջ, այդ թվում Եկեղեցու շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ եւ այլ հարցերի», - ասաց Առաքելյանը: Անդրադառնալով համապետական ընտրություններին եւ հնարավոր համաձայնություններին՝ Առաքելյանը ընդգծեց, որ դեռեւս վերջնական որեւէ որոշում չկա: «Տարբեր ուժերի հետ տարբեր քննարկումներ կան: Չեմ բացառում նաեւ քննարկումները ձեր կողմից թվարկած ուժերի հետ, սակայն այս պահին որեւէ հստակ պատկերացում կամ համաձայնություն գոյություն չունի: Քննարկումներն ու աշխատանքները շարունակվում են», - նշեց նա: «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվեց նաեւ, թե ինչպիսին է «Ապրելու երկիր» կուսակցության վերաբերմունքը քաղաքական դաշտում նոր ձեւավորված «Միասնության թեւեր» շարժման նկատմամբ: Մեսրոպ Առաքելյանի խոսքով՝ հարաբերությունները վաղուց են ձեւավորված: «Մենք լավ հարաբերություններ ունենք եւ ունեցել ենք դեռեւս մինչեւ շարժման ձեւավորումը: Արման Թաթոյանը մշտապես դրսեւորել է ակտիվություն եւ հանրային պատասխանատվություն, ուստի հնարավոր քննարկումները նոր չեն», - ասաց նա:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Վրաստանում ծնված, Երեւանում սովորած, Ռուսաստանի Դաշնությունում աշխատած Արտավազդ Նազարեթյանը 2018 թվականից ի վեր զբաղեցնում է ՀՀ Արարատի մարզպետի տեղակալի պաշտոնը: Փոխմարզպետի՝ 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի համաձայն՝ վերջինս 2022 թվականին գնել է բնակարան «ՄԼ մայնինգ» ՍՊԸ-ից: Բնակարանն արժեցել է 33 մլն 582 հազար դրամ: Փոխմարզպետը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Նազարեթյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 5, 289 ԱՄՆ դոլար, 2 մլն 61 հազար դրամ: Կանխիկ դրամական միջոցները տարեսկզբի համեմատ գրեթե 2 անգամ ավելացել են՝ 2 մլն 800 հազար դրամից կազմելով 6 մլն 240 հազար դրամ: Փոխմարզպետ Նազարեթյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 21 մլն 504 հազար դրամ, որից 11 մլն 714 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Արարատի մարզպետի աշխատակազմից: Եկամուտներից 2 մլն 989 հազար դրամը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եկամուտն է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ նաեւ, որ փոխմարզպետի կինը՝ Լիանա Այվազյանը, Պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղարի օգնականն է: ԽԾԲ-ն մերժելու եկած Նիկոլ Փաշինյանի իշխանության մեջ ամենուր ԽԾԲ կանոններով են առաջնորդվում:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները հայտնում են, որ իրավապահ համակարգում կա հստակ հրահանգ՝ Հայ առաքելական եկեղեցու՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ, Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանին հենց Հայաստան մուտք գործելու պահին ձերբակալելու եւ կալանքի տակ պահելու մասին: Թեման, մեր տեղեկություններով, պահվում է «սպասման ռեժիմում» մինչեւ նրա ժամանումը: (Պաշտոնական կառույցները հրապարակային մեկնաբանություն այս տեղեկության մասին առայժմ չեն հնչեցրել): «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ հենց այս հանգամանքով էլ կարող է պայմանավորված լինել, որ Եզրաս արքեպիսկոպոսը տեւական ժամանակ Հայաստան չի գալիս. կաթողիկոսի կողմնակիցներն էլ, ըստ նույն տեղեկությունների, տեղյակ են վարչապետ Նիկոլ Փաշինյանի հնարավոր հրահանգից եւ դա համարում են հերթական ճնշման դրսեւորում եկեղեցական շրջանակների նկատմամբ՝ հատկապես իշխանություն-եկեղեցի հարաբերությունների սրման ֆոնին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՆՈՐ ՏԱՐՈՒՄ ԻՆՁ ՀԵՏ ԿՏԱՆԵՄ ՆՈՐ ՀՈՒՅՍԵՐ», Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տարվա այս օրերին բոլորս մի պահ կանգ ենք առնում՝ խորհելու անցած ճանապարհի ու սղասվողի մասին: Նոր տարին մարդկանց միավորելու խորհուրդ ունի, ուստի մեր ամանորյա զրույցում փորձել ենք համադրել քաղաքական ու մարդկային թեմաները:

«Ժողովուրդը» հյուրընկալել է «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության նախագահ Սուրեն Պետրոսյանին:

-Պարոն Պետրոսյան, ի՞նչ սովորեցիք 2025 թվականին, ո՞րն էր Ձեր ամենամեծ ձեռքբերումը:

-Սովորեցի, ավելի ճիշտ՝հասկացա, որ մենք ապրում ենք մեծ միֆերի մեջ. իրականում գործնականում ամեն ինչ հնարավոր է ու իրագործելի:

-Անցած տարվա համար ո՞ւմ եւ ինչի՞ համար եք շնորհակալ:

-Շնորհակալ եմ բոլորին, թե՛ նրանց, ովքեր իմ փորձությունների պատճառ դարձան, թե՛ նրանց, ովքեր դժվար պահերին իմ կողքին էին: Յուրաքանչյուրը իր ձեւով մեծ դեր է ունեցել իմ կյանքում: Փորձությունները սովորեցնում են ուժեղ լինել, կոփում են կամքը:

Նույնիսկ նրանց, ովքեր բացասական իմաստով պատճառը եղան այդ փորձությունների, միեւնույնն է, շնորհակալ եմ:

-Ի՞նչ եք ցանկանում թողնել 2025 թվականին եւ ի՞նչ եք պարտադիր Ձեզ հետ տանելու նոր տարի:

-Նոր տարում ինձ հետ տանելու եմ նոր հույսեր, նոր նպատակներ ու նոր տեսլականներ: Իսկ անցնող տարում թողնելու եմ սին հավատը որոշ իրավիճակների եւ մարդկանց նկատմամբ:

-Ըստ Ձեզ՝ո՞րն էր 2025 թվականին Հայաստանի համար ամենամեծ նվերը:

-2025 թվականին Հայաստանի համար նվեր չի եղել:

-Իսկ ո՞րն եք ցանկանում, որ լինի 2026 թվականին:

-Ընդդիմափոխություն եւ իշխանափոխություն:

-Եթե Նոր տարվա սեղանին միայն մեկ ուտեստ ունենալու ընտրություն ունենայիք, ո՞րը կընտրեք:

-Բարդ հարց է (ժպտում է). եթե մեկը պիտի պահենք, երեւի՝ թփով տոլման:

-Ամանորին ընդառաջ ո՞ր ֆիլմն եք նախընտրում դիտել՝ «Տանը մենակը», «Ճակատագրի հեգնանք կամ բաղնիքդ անուշ», թե՞ «Մեր բակը»:

-Անկեղծ ասած՝ հիմնականում նախընտրում եմ դիտել այն, ինչ երեխաներն են սիրում դիտել: Բայց եթե այդ երեքից պիտի ընտրեմ, ապա՝ «Մեր բակը», որովհետեւ ֆիլմի ժամանակահատվածը շատ լավ հիշողություններ է առաջ բերում, մանավանդ, որ այդ ժամանակ մեր հաղթանակած տարիներն էին:

-Ինչպե՞ս եք պատկերացնում Ձմեռ պապիկին քաղաքական դաշտում. ի՞նչ առաքելություն կունենար նա:

-Պարզ, արդար եւ ամենակարեւորը՝ սուտն ու կեղծիքը մաքրելու առաքելությամբ օժտված:

-Ձեր ընդդիմախոսներին ի՞նչ կցանկանաք 2026 թվականին:

-Բոլորին կցանկանամ առողջություն եւ արդարություն:

-Իսկ իշխանությանը ի՞նչ եք ցանկանում:

-Ազգային ինքնություն:

-Ձեզ համար ի՞նչ երազանք կպահեք ամանորին:

-Կցանկանամ ունենալ շատ երեխաներ:

-Ամանորը դիմավորել Հայաստանո՞ւմ, թե՞ Հայաստանից դուրս:

-Բնականաբար՝Հայաստանում:

-Ամանորի գիշերը ի՞նչ կխնդրեք Աստծուց:

-Իմաստություն, կամք, ուժ եւ ողջամտություն:

-Ձեր ուղերձը՝Հայաստանին եւ հայ ժողովրդին:

-Անզորության եւ հաշտվողականության կեղծ միֆերը պետք է կոտրել, դրանք փոխարինել պայքարի օրակարգով, իսկ հուսահատությունը՝ ապագայի հանդեպ աստվածային հույսով:

Ամանորյա զրույցը վարեց
ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԵՐԿՈՒ ԹԵՎԵՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐԸ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«ԲԱԽՈՒՄՆԵՐՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՆ», ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Այս քայլով Փաշինյանը ցանկանում է աշխարհին ցույց տալ, որ ինքը չի պայքարում եկեղեցու դեմ, բայց մենք՝ Հայաստանում, գիտենք, որ նա շղթայում է հոգեւորականների եւ պայքարում եկեղեցու անկախության դեմ»: Այս մասին դեկտեմբերի 18-ին լրագրողների հետ զրույցում հայտարարել է «Մեր ձեւով» շարժման համակարգող Նարեկ Կարապետյանը:

«Նա փորձում է ցույց տալ, որ սա ներեկեղեցական խնդիր է, սակայն Հայ Առաքելական եկեղեցու եպիսկոպոսներից ոմանք, որոնք աշխարհիկ թուլություններ են ունեցել, շղթայվել են: Ընդ որում մենք այնքան ամուր, մաքուր կյանքով ապրող սրբազաններ ունենք, որ ոչ մի կոմպրոմատ չկարողացան գտնել նրանց դեմ: Սա ցույց է տալիս, որ եկեղեցում կան խորքային հավատքով մարդիկ, ովքեր հետեւում են եկեղեցական բոլոր կանոններին», - հավելել է Կարապետյանը:

Նրա խոսքով՝ բախումները անընդունելի են, եւ հայ հասարակության մեջ բախումներ չպետք է տեղի ունենան: «Մենք բոլորս եկել ենք մասնակցելու եկեղեցու պաշտպանությանը», - նշել է նա:

Այն հարցին, թե ինչու է Մայր Աթոռում փակցված Սամվել Կարապետյանի դիմանկարը, Նարեկ Կարապետյանը հայտնել է, որ «Սամվել Կարապետյանի նկարը, ինչպես նաեւ հայ եկեղեցու մյուս բարերարներինը, կախված է վեհարանում, քանի որ վեհարանը կաթողիկոսի աշխատանքի վայրն է: Ինչքան մենք գիտենք, դա նաեւ կաթոլիկ եկեղեցու ավանդույթների մեջ է: Ճանաչելով Սամվել Կարապետյանին՝ ես կարող եմ ասել, որ նա երբեք չի բարձրաձայնել այն բաները, որ ինքն արել է, եւ երբեք կողմ չի եղել: Բայց դա մեր հոգեւոր դասի քայլն էր՝ի պատիվ իրենց», - ընդգծել է Կարապետյանը:

Նրա գնահատմամբ, Նիկոլ Փաշինյանը պառակտում է եկեղեցին եւ հասարակությունը: «Մենք բոլորս գիտենք, թե որոշ հոգեւորականներ ինչպես են հայտնվել նման իրավիճակում (խոսքը Փաշինյանին աջակցություն հայտնած 10 եպիսկոպոսների մասին է - խմբ.): Նրանցից մի քանիսին ես անձամբ եմ ճանաչում: Կարող եմ վստահությամբ ասել, որ նրանց կարծիքը Փաշինյանի մասին ավելի բացասական է, քան շատ ընդդիմադիրների կարծիքը», - ասել է Կարապետյանը:

Նրա խոսքով՝ եկեղեցու անկախության դեմ ուղղված իշխանությունների քայլերը նպատակ ունեն հարվածել Հայոց ցեղասպանության ճանաչմանը եւ միջազգային ատյաններում հայկական շահերի ներկայացմանը: Կարապետյանը հավելել է, որ դրան նախորդել են Թուրքիայի հետ բանակցությունը եւ որ միայն հետագայում կիմանանք, թե դա ինչ արդյունքների է հանգեցրել եւ ինչ պարտավորություններ են ստանձնել իշխանությունները:

Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դեկտեմբերի 17-ին Հայ առաքելական եկեղեցու տասը եպիսկոպոսներ հանդես էին եկել հայտարարությամբ, դիմել ժողովրդին եւ դեկտեմբերի 18-ին՝ ժամը 17:00-ին, հրավիրել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Այս հայտարարությունից հետո Հայ առաքելական եկեղեցու Արագածոտնի թեմը եւս հանդես եկավ հայտարարությամբ եւ հայտնեց, որ դեկտեմբերի 18-ին՝ ժամը 19:00-ին Արագածոտնի թեմի Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցում նախատեսված միասնական ժամերգությունը կտեղափոխվի եւ տեղի կունենա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նույն օրը՝ժամը 17:00-ին:

Երեկ՝ երեկոյան, Մայր Աթոռի բակում հավաքված քաղաքացիները վանկարկում էին Վեհափառ հայրապետի անունը՝ հայտնելով իրենց աջակցությունը:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ

Դեկտեմբերի 9-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը եւ Հայաստանում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանությունը Երեւանում համատեղ կազմակերպել էին «Ռիսկ, բարեփոխում եւ դիմակայունություն» խորագրով համաժողովը: Այս մասին հայտնել են ՀՀ ՊՆ-ից:

Համաժողովին մասնակցել են ՀՀ գերատեսչությունների, Հայաստանում գործող ՆԱՏՕ-ի անդամ երկրների դեսպանությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ ուրիշներ:

Համաժողովի մեկնարկին բացման խոսքով հանդես են եկել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Հրաչյա Սարգսյանը եւ ՀՀ-ում Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդրա Քոուլը

Միջոցառումն իրականացվել է աուդիտի կարողությունների զարգացման եւ ռիսկերի կառավարման բարեփոխումների թեմայով ՀՀ պաշտպանության նախարարության եւ բրիտանական կողմի միջեւ եռամյա համագործակցության ծրագրի շրջանակում:

2026Թ. ԾՐԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԻՋԵՎ

Դեկտեմբերի 15-16-ը Փարիզում տեղի են ունեցել Հայաստան-Ֆրանսիա երկկողմ ռազմավարական պաշտպանական խորհրդակցությունները, որոնց մասնակցել է ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության եւ միջազգային համագործակցության վարչության պետ Լեւոն Այվազյանի գլխավորած պատվիրակությունը:

Խորհրդակցությունների ընթացքում Լեւոն Այվազյանը հանդիպել է Ֆրանսիայի զինված ուժերի նախարարության Միջազգային հարաբերությունների եւ ռազմավարության տնօրինության նորանշանակ ղեկավար Գիյոմ Օլանիեի հետ, որից հետո պատվիրակությունների կազմով քննարկումներ են տեղի ունեցել տնօրինության ղեկավարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Էրիկ Պատիեի հետ:

Խորհրդակցությունների ընթացքում ամփոփվել են համագործակցության շրջանակում 2025 թվականին իրականացված աշխատանքները, եւ նախանշվել են հաջորդ տարվա ծրագրերը:

Կողմերն ընդգծել են երկկողմ համագործակցությանը ռազմավարական բովանդակություն եւ ինստիտուցիոնալ բնույթ հաղորդելու կարեւորությունը:

Խորհրդակցությունների արդյունքում ստորագրվել է Հայաստան-Ֆրանսիա պաշտպանական համագործակցության 2026 թվականի ծրագիրը, որն ընդգրկում է մի քանի տասնյակ միջոցառումներ ՋՈՒ կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում:

Որոշում է կայացվել հաջորդ ռազմավարական պաշտպանական խորհրդակցություններն անցկացնել Երեւանում:

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԸ ԶԱՐԳԱՆՈՒՄ Է, ԾԱՅՐԱՄԱՍԵՐԸ՝ ՈՉ

Հայաստանն անհամաչափ է զարգանում: Գրեթե ամեն ինչ՝Հայաստանի արտադրական, կրթական, առողջապահական հիմնարկությունների բացարձակ մեծամասնությունը կենտրոնացած է մայրաքաղաք Երեւանում, ինչը սպառնալիք է երկրի համաչափ զարգացման տեսանկյունից: Մարզերում էլ զարգացման անհամաչափություն կա. մարզկենտրոնները, համայնքների կենտրոն քաղաքները համեմատաբար զարգացած են՝ի տարբերություն մարզերի այլ բնակավայրերի, գյուղերի: Սակայն զարգացման տեմպերի անհամաչափություն գոյություն ունի նաեւ համայնքի կենտրոն հանդիսացող քաղաքների տարբեր հատվածների միջեւ: Վերջին տարիներին Դիլիջան քաղաքում բազմաթիվ ծրագրեր են իրականացվել. փողոցներ են ասֆալտապատվել, փողոցային լուսավորության ցանցը բարելավվել է, բազմաբնակարան շենքերին կից տարածքներում մանկական խաղահրապարակներ են կառուցվել: Տուրիստական Դիլիջանը բարեկարգվել, կառուցապատվել է: Սակայն Դիլիջանի կառուցապատումը, բարեկարգումը գերազանցապես տեղի է ունեցել տուրիստական քաղաքի կենտրոնում, իսկ Դիլիջան քաղաքի ծայրամասերում երկար տարիներով առկա բազում, բազմապիսի խնդիրներն այդպես էլ չեն լուծվում: Դիլիջան քաղաքի բնակչուհի, հասարակական ակտիվիստ Լուսինե Գրիգորյանը Դիլիջանի անհամաչափ զարգացման վերաբերյալ ասում է. «Քաղաքը զարգանում է, բայց ոչ բոլորի համար: Կենտրոնը օր օրի շքեղանում է՝նոր սալիկներ, լուսավորություն, ցուցադրական ծրագրեր ու ժապավեն կտրելու հանդիսավոր պահեր: Իսկ մի քանի փողոց այն կողմ՝ ծայրամասերում, նույն քաղաքը շարունակում է ապրել մոռացվածի կարգավիճակում: Այստեղ ճանապարհները դեռ փոսերով են, լուսավորությունը՝թերի կամ բացակա, բակերը՝ անտեսված, սոցիալական ու մշակութային ծրագրերը՝թերի:

Ստացվում է, որ քաղաքը բաժանված է «տեսանելի» եւ «անտեսանելի» հատվածների: Զարգացումը, որը սահմանափակվում է միայն կենտրոնով, զարգացում չէ. դա ցուցադրություն է:

Երբ ծրագրերը պտտվում են նույն հասցեների շուրջ, իսկ ծայրամասի բնակիչները տարիներով դուրս են մնում ուշադրությունից, խոսքն արդեն անարդար քաղաքականության մասին է: Քաղաքը մեկ ամբողջություն է, ոչ թե միայն կենտրոնական հրապարակ: Եվ եթե շարունակվի այս անհամաչափ մոտեցումը, ապա կենտրոնի շքեղության հետեւում ավելի ակնհայտ կդառնա ծայրամասերի լռեցված դժգոհությունը: Զարգացումը պետք է հասնի բոլորին, այլապես այն կորցնում է իր իմաստը: Դիլիջան քաղաքի Կամոյի, Վասիլեւի, Կաղնի Խաչի եւ այլ անտեսված թաղամասերի ու փողոցների բնակիչնե՛ր, ձեր երեխաներն էլ կուզեին, չէ՞, գեղեցիկ խաղահրապարակ ունենալ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏԱՐՎԱ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»-Ը՝ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՂՔԻՆ

2025 թվականին «Ժողովուրդ» օրաթերթը գրանցել է մի շարք նշանակալի ձեռքբերումներ: Քաղաքացիների խնդիրները մշտապես դահեկով մեր ուշադրության կենտրոնում՝ կարողացել ենք բարձրաձայնել, ուսումնասիրել եւ նպաստել բազմաթիվ հարցերի ճիշտ ու արդարացի լուծմանը

Ստորեւ ներկայացնում ենք այն նշանակալի հրապարակումները, որոնց միջոցով բարձրաձայնված քաղաքացիների խնդիրները ոչ միայն արձանագրվել են, այլեւ հանգուցալուծում են ստացել:

1. «Սուլթան համիդի ժամանակ հայերի փողերը տվել են, անկախ Հայաստանում չեն տալիս»:

2025 թվականի օգոստոսի 28-ին բարձրաձայնել էինք մեզ ահազանգած քաղաքացու խնդիրը: Մեր զրուցակիցը հայտնել էր, որ ինքն ու իր՝ շուրջ 30 հոգուց բաղկացած աշխատակազմը, պայմանավորվածության համաձայն, կատարել են աշխատանք, սակայն գործատուն հետագայում հրաժարվել է վճարել դրա դիմաց:

Քաղաքացու խոսքով՝ գործատուն մերժել է վճարել գումարի մի մասը, որը կազմել է 5 միլիոն 300 հազար դրամ: Նա նշել էր, որ խնդրի լուծման համար դիմել է տարբեր պետական գերատեսչությունների, անգամ՝ վարչապետի աշխատակազմ, սակայն բոլոր փորձերը մնացել են անարդյունք:

Մեր զրուցակցի պարզաբանմամբ, պատկան մարմինները խնդրին ընթացք չեն տվել այն հիմնավորմամբ, որ իր եւ գործատուի միջեւ կնքված պայմանագիրը եղել է ոչ թե աշխատանքային, այլ ծառայությունների մատուցման պայմանագիր, ինչն էլ պատճառ է դարձել իրավական գործընթաց չսկսելու համար:

Մեր կողմից քաղաքացու խնդիրը հրապարակայնացնելուց որոշ ժամանակ անց ամբողջ գումարը փոխանցվել է նրա բանկային հաշվին: Այս մասին մեզ տեղեկացրել է հենց նույն քաղաքացին՝ զանգահարելով խմբագրություն եւ ուրախությամբ հայտնելով, որ խնդիրը լուծվել է:

2. «Ահազանգ. Eurojob ընկերությունը կեղծում է փաստաթղթերը եւ խաբում քաղաքացիներին»:

2025 թվականի մայիսի 25-ին հրապարակել էինք տեսանյութ, որտեղ քաղաքացին ահազանգում է այն մասին, որ ինքը եւ մի քանի այլ քաղաքացիներ խաբվել են Սայաթ-Նովա 40 հասցեում գործող Eurojob ընկերությունից: Մեզ ահազանգած քաղաքացին նշում է, որ տեսնելով ընկերության գովազդները՝ մտադրվել էր մեկնել արտասահման աշխատելու նպատակով: Այցելելով գրասենյակ՝ քաղաքացին գործատուի հետ համաձայնության է եկել եւ ստորագրել պայմանագիր, ըստ որի՝ փաթեթի արժեքը կազմում է 590 հազար դրամ: Փուլ առ փուլ քաղաքացին վճարել է գումարը, վերցրել պայմանագիրը եւ գնացել դեսպանատուն, որտեղ էլ քաղաքացուն հայտնել են, որ պայմանագիրը կեղծ է: Կրկին դիմելով գործատուին գումարը հետ ստանալու համար, քաղաքացին մերժում է ստացել, ինչից հետո գործատուն այլեւս չի պատասխանել նրա զանգերին:

Քաղաքացին որոշեց դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն: Մենք բարձրաձայնեցինք նրա խնդիրը, եւ նույն օրը գործատուն կապ հաստատեց թե՛ քաղաքացու, թե՛ մեզ հետ: Ուղիղ մեկ շաբաթ անց ահազանգած քաղաքացին մեզ տեղեկացրեց, որ գումարի մի մասն իրեն վերադարձրել են, իսկ մի մասն էլ խոստացել են մոտ ժամանակներս փոխանցել հաշվեհամարին:

3. «Արթուր Օսիպովի ասածն այն էր, որ Աննա Հակոբյանը պատերազմի ժամանակ Արցախում է եղել. ակցիայի մասնակից». (Նյութը հրապարակվել էր 2025 թվականի ապրիլի 21-ին):

Ապրիլի 18-ին մոտ չորս տասնյակ արցախցիներ բողոքի ակցիա իրականացրին Երեւանի Նաիրի Զարյան 17/Ա հասցեում գտնվող Արցախի Հանրապետության ներկայացուցչության շենքի դիմաց: Նշենք, որ այս չորս տասնյակ արցախցիները ՀՀ-ում գործող իշխանության, այսպես կոչված, թունդ աջակիցներն են եւ 2018 թվականին էլ մեծ ոգեւորվածությամբ ընդունեցին հեղափոխությունը: Ցուցարարներին հանգստացրեց եւ իրենց հուզող հարցերին պատասխանեց ԱՀ հինգերորդ նախագահ Սամվել Շահրամանյանը: Ցուցարարները, Շահրամանյանի հետ ընդհանուր հայտարարի գալով, որոշեցին երկու օր անց կրկին հանդիպել: Ապրիլի 21-ին հանդիպումից հետո արցախցի մի ցուցարար լրագրողների հետ զրույցում նշեց, թե արցախցի պաշտոնյաների, պատգամավորների, գեներալների որդիները «չեն կռվել», ինչին հակադարձելով՝ ArmLur.am-ի լրագրողը անուն առ անուն նշել է գեներալների, պաշտոնյաների եւ պատգամավորների անուններ, որոնց որդիները մասնակցել են պատերազմին, ինչպես նաեւ հայտնել էր մի պատգամավորի որդու մասին, որը կամավոր մասնակցել էր 44-օրյա պատերազմին եւ զոհվել: Նույն օրը՝ երեկոյան, նույն արցախցին ուղիղ եթերով ներողություն խնդրեց իր հայրենակիցներից եւ ապա շեշտեց, որ իր կողմից թյուրիմացություն է եղել նման անպատասխանատու հայտարարություն անելը:

Նշենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը եւ ArmLur.am լրատվականը մշտապես անդրադարձել են արցախհայության խնդիրներին, քարշրաշայնել այդ մասին եւ շատ դեպքերում ստացել դրական արդյունք:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՔԱՆԴԱԿԿԱԾ ԴՌԱՆ ՓԵՂԿ՝175 ՄԼՆ ԴՐԱՄՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԳՆԻ ԲԱՑԱՌԻԿ ՆՄՈՒՇԸ

Կառավարությունն իր երեկվա՝ դեկտեմբերի 18-ի նիստում որոշեց պահուստային ֆոնդից ԿԳՄՍ նախարարությանը հատկացնել 175 մլն 360 հազար դրամ, որը կուղղվի Լոնդոնի միջազգային աճուրդում վաճառվող հայկական բացառիկ մշակութային արժեքի՝ 1188 թվականին պատրաստված եւ քանդակված փայտյա դռան փեղկի ձեռքբերմանը եւ Հայաստան տեղափոխմանը:

Ինչպես ArmLur.am-ը տեղեկանում է, հիմնավորման մեջ նշվում է, որ ի տարբերություն հայկական ճարտարապետության, քանդակագործության, մանրանկարչության եւ գորգագործության ստեղծագործությունների՝ միջնադարյան հայկական փայտագործության բավականին քիչ օրինակներ են պահպանվել: Հայկական փայտագործության ամենամեծ թվով նմուշները մեզ են հասել զարդանախշված եկեղեցական դռների տեսքով: Մինչեւ 1990-ական թվականները հայտնի էր միայն ութ նման կտոր: Փայտի փորագրության արվեստի եւս մեկ նմուշ շրջանառության մեջ է դրվել 1985թ.-ին:

Նկարագրված մշակութային արժեք ներկայացնող դռան փեղկը ներկայումս գտնվում է Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում՝ Սէմ Ֆոգի պատկերասրահում: Հաշվի առնելով նկարագրված փեղկի արժեքավոր նշանակությունը Հայաստանի, հայ մշակույթի եւ կրոնի համար՝ որոշվել է ձեռք բերել փեղկը եւ տեղափոխել այն Հայաստան: Հայաստան տեղափոխելուց հետո արժեքը կցուցադրվի Հայաստանի պատմության թանգարանում:

Արժեքի ձեռքբերման համար բրիտանական պատկերասրահը առաջարկել է վաճառքի գին՝ 330.0 հազար ֆունտ ստեռլինգ (մոտ 165.0 մլն դրամ): Պետք է կատարվեն նաեւ տեղափոխման եւ ապահովագրության ծախսեր: Անհրաժեշտ ընդհանուր հատկացումը կազմում է 175,360.0 հազար դրամ, որը կհատկացվի Մշակույթի զարգացման հիմնադրամին, եւ վերջինիս կողմից կապահովվեն բոլոր գործարքները:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱՄՓՈՓԵԼՈՎ ՏԱՐԻՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

ՆԵՐՈՒՄ Է ՇՆՈՐՀՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը եւ ArmLur.am-ը 2025 թվականի տարեսկզբից սկսել են «Կյանքը ճաղերի հետեւում» հաղորդաշարը, որի շրջանակում անդրադառնում ենք Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում գտնվող դատապարտյալների կյանքին, խնդիրներին եւ ճակատագրերին:

«Ժողովուրդ» օրաթերթը իր ընթերցողներին ներկայացնում է այն դեպքերը, երբ հաղորդման ընթացքում դատապարտյալների կողմից բարձրաձայնված խնդիրները մասնակի կամ ամբողջությամբ լուծում են ստացել: Այդպիսի օրինակներից մեկը վերաբերում է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում գտնվող դատապարտյալներից մեկին՝ Արմեն Գրիգորյանին (հարգելի պատճառներով անուն-ազգանունը փոխված է), որը դատապարտվել էր ազատազրկման 8 տարի եւ 3 ամիս ժամկետով, եւ արդեն շուրջ երեք տարի գտնվում էր նշված ՔԿՀ-ում:

Մեր զրուցակցի խոսքով՝ կուտակված պարտքերը, ծանր հոգեբանական վիճակը եւ աշխատանք չունենալը նրան դրդել էին 2021 թվականի օգոստոսի 31-ին՝ ժամը 10:18-ի սահմաններում, գազային ատրճանակով մուտք գործել Երեւանի Արշակունյաց պողոտա 34/4 հասցեում գտնվող «Երեւան Մոլ» առեւտրի կենտրոնում գործող բանկերից մեկը:

Դատապարտյալի հետ ունեցած հարցազրույցը հանրային մեծ արձագանք էր ստացել, իսկ տեսանյութը հավաքել էր զգալի դիտումներ:

Վերադաս մարմիններից ստացված տեղեկությունների համաձայն՝ մեր լրատվամիջոցի անդրադարձը, ինչպես նաեւ դատապարտյալի դիմումը էական ազդեցություն են ունեցել գործի հետագա ընթացքի վրա: Արդյունքում՝ 2025 թվականի դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության նախագահը ներում է շնորհել մեր զրուցակցին, եւ նա ազատ է արձակվել:

ՊԵՐՈՒԱՑԻ ԿՆՈՋԸ ԿԱՐՏԱՀԱՆՁՆԵՆ ՊԵՐՈՒ

Բարձրաձայնված հաջորդ խնդիրը պակաս կարեւոր չէ եւ լուծում է ստացել նաեւ «Ժողովուրդ»-ի՝ դարձյալ «Կյանքը ճաղերի հետեւում» հաղորդաշարի հերթական թողարկման արդյունքում:

2025 թվականի մարտին «Ժողովուրդ» օրաթերթի «Կյանքը ճաղերի հետեւում» հաղորդաշարի շրջանակում առանձնազրույց էինք ունեցել Մարիա Ալվարադո Ֆլորեսի հետ: Նրա նկատմամբ մեղադրանք էր առաջադրվել այն հիմքով, որ Պերուում անհայտ անձից վերցնելով մոտ 1,5 կիլոգրամ կոկաին՝ թմրամիջոցը թաքցրել էր երկու ճամփորդական ուսապարկերի գաղտնարաններում եւ տեղափոխել Հայաստան՝ այստեղ այն փոխանցելու նպատակով: Թմրամիջոցը բացահայտվել էր «Զվարթնոց» օդանավակայանում:

2015 թվականին դատարանը Մարիա Ալվարադո Ֆլորեսին դատապարտել էր 15 տարվա ազատազրկման, որոնցից 10 տարին նա արդեն անցկացրել էր կանանց քրեակատարողական հիմնարկում:

Մեզ հետ զրույցում պերուացի կինը խնդրում էր աջակցել իրեն՝ Պերու տեղափոխվելու հարցում, որպեսզի կարողանա վերադառնալ ընտանիքի մոտ:

«Ժողովուրդ» օրաթերթի հրապարակումներն ու հաղորդման շրջանակում արված անդրադարձը նույնպես իրենց ազդեցությունն են ունեցել. արդարադատության նախարարության եւ արտաքին գործերի նախարարության համատեղ աշխատանքի արդյունքում գործընթաց է սկսվել Պերուի Հանրապետության հետ, եւ արդեն նախաձեռնություն կա, որ Մարիա Ալվարադո Ֆլորեսը կտեղափոխվի Պերու: Պերուական կողմը տվել է իր համաձայնությունը, սակայն պայմանով, որ տեղափոխման ֆինանսական ծախսերը կհոգա Հայաստանի Հանրապետությունը:

Վերոնշյալ ձեռքբերումները վկայում են հետեւողական աշխատանքի, պատասխանատու մոտեցման եւ հստակ նպատակների մասին: Առաջիկայում եւս շարունակվելու են նախաձեռնությունները՝ ուղղված կայուն առաջընթացին եւ նոր արդյունքների գրանցմանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈՆՋՈՐՅԱՆԻՆ ՀԱՐՑ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԺՈՒՄ ԵՆ ԼՐԱԳՐՈՂԻՆ

Դեկտեմբերի 17-ի դատական գրությամբ ԱԺ աշխատակազմը գլավոր նախագուշացում է ուղարկել «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ին եւ ArmLur-ի լրագրող Սոնա Գրիգորյանին՝ արձանագրելով, որ նա ԱԺ-ում «մասնագիտական գործունեություն է իրականացրել չթույլատրված վայրում», փորձել է մեկնաբանություն հարցնել դատգամավորից, դատգամավորը հրաժարվել է դատասխանելուց, իսկ հաջորդիվ հրադարակվել է նյութ ArmLur-ում:

Այսինքն՝ հարց տալու եւ դրրա առիթով նյութ գրելու համար լրագրողը պատժվում է:

Գրությունը ստորագրված է աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանի կողմից:

Այդ փաստաթղթում նշվում է, որ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը դիմում է ներկայացրել՝ պնդելով, որ դեկտեմբերի 3-ին ԱԺ-ի ճաշարանում «առանց թույլտվության» լրագրողը աշխատել է:

Այսինքն՝ իշխող խմբակցության ղեկավարը բողոքարկում է լրագրողի գործողությունը, իսկ վարչական մեքենան դա վերածում է կարգապահական գործընթացի: Մինչդեռ ստում է Կոնջորյանը, քանի որ Սոնա Գրիգորյանն իրեն ճաշարանում չի մոտեցել եւ կադրերը ֆիքսված են բոլոր տեսախցիկներով:

ԱԺ աշխատակազմը հղում է անում լրագրողների հավատարմագրման կարգին՝ շեշտելով, որ լրագրողը պետք է աշխատի միայն հատուկ առանձնացված վայրերում կամ պատգամավորի հետ նախապես համաձայնեցված հատվածում, եւ հիշեցնում է նաեւ ԱԺ նախագահի հաստատած անվտանգության կանոնները՝ «հատուկ վերահսկելի գոտիներում» լրագրողական գործունեությունն արգելելու մասին ու նաեւ սպառնում, նույն կարգով աշխատակազմը կարող է սկսել ոչ միայն նախազգուշացման, այլեւ հավատարմագրումը դադարեցնելու գործընթաց :

Մի կողմ թողնենք ազատ տեղաշարժի սահմանափակման անթույլատրելի կարգի կարգավորումները. պետք է արձանագրենք, որ լրագրողը ՊՊԾ աշխատակցից թույլտվություն վերցրել է եւ կանգնել միջանցքում՝ սպասելով կոնջորյանին: Իսկ ՔՊ վերնախավը՝ Կոնջորյանն ու աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը, Ալեն Սիմոնյանի գլխավորությամբ փաստացի պատժում են լրագրողին «հարց տալու» համար: Եվ այստեղ երեք դերակատարների պատասխանատվությունն է կուտակվում մեկ կետի վրա

ա) ԱԺ նախագահը, որի կանոններն այսօր չեն օգտագործվում թափանցիկությունը, հաշվետվողականությունն ապահովելու համար, փոխարենը լրագրողի կողմից հարց տալը ապօրինություն է որակվում:

բ) Աշխատակազմի ղեկավարը, որը չեզոք ադմինիստրացիա լինելու փոխարեն փաստացի հանդես է գալիս ՔՊ-ի կամակատարի դերում:

գ) ՔՊ խմբակցության ղեկավարը, որը, ունենալով քաղաքական եւ հանրային հաշվետվողականության պարտավորություն, խուսափում է պատասխանել հարցին՝ բողոք գրելով լրագրողի դեմ, ինչը վարչական ճնշում է:

Իսկ ինչն է իրականում խնդիրը. Կոնջորյանը չի ցանկանում բացատրել, թե ինչպես է իր եղբոր ընկերոջից շուկայականից ցածր գնով առանձնատուն գնել, դասավորել գործերն այնպես, որ մինչեւ 55 մլն կազմի արժեքը, որ եկամտահարկից օգտվի եւ քիչ գումար ծախսելով՝ դղյակի տեր դառնա. այս փաստերը բացահայտել է «Հետք»-ը:

Կոնջորյանն ու իր մի քանի մլն դրամ ամսական աշխատավարձ ստացող տիկինը՝ «Հայփոստ»-ի տնօրեն Շուշանիկ Ալեքսանյանը, ակնհայտորեն հարստանում են տարեցտարի, բայց հաշվետվություն ու պարզաբանում տալուց խուսափում են:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԸ ԳՏՆՎԵԼ Է

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության եւ Արարատի մարզային վարչության ծառայողները համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 16-ին Կոտայքի մարզի Բուժական գյուղում հայտնաբերել, ձերբակալել եւ մարզային վարչություն են տեղափոխել Երեւանի բնակիչ 41-ամյա մի տղամարդու:

Նա սեպտեմբերի 30-ից հետախուզվում էր հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելու, փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելու կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր իրացնելու, պատրաստելու կամ օգտագործելու եւ տրանսպորտային միջոցի կամ հրազենի նույնականացման տարրերը կեղծելու կամ ջնջելու մեղադրանքներով. խափանման միջոցը՝ կալանք:

41-ամյա տղամարդը տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

ԹՄՐԱՄԻՋՈՑ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Քրեական ոստիկանության Լոռու մարզային վարչության ծառայողները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Ստեփանավան քաղաքի 48-ամյա բնակիչը թմրանյութ է պահում:

Դեկտեմբերի 16-ին նշված հասցե մեկնած քրեական ոստիկանները 48-ամյա տղամարդու տան բակում գտնվող անվադողերի եւ ավտոմեքենայի տեսանելի հատվածներում նկատել են թմրամիջոցի նմանվող դեղնականաչավուն զանգվածներ:

48-ամյա ստեփանավանցին ձերբակալվել եւ տեղափոխվել է մարզային վարչություն: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ 48-ամյա ստեփանավանցու տան բակում հայտնաբերվել է մոտ 360 գրամ կանեփանման չորացված մանրացված զանգված: 48-ամյա տղամարդը տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔ

Դեկտեմբերի 16-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Սյունիքի մարզում: Ժամը 06:25-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Գորիսի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ «ցրտահարություն» ախտորոշմամբ «Գորիս» բժշկական կենտրոն է տեղափոխվել մի տղամարդ, ով ժամեր անց մահացել է:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց է մեկնել ոստիկանության Գորիսի բաժնի օպերատիվ խումբը համայնքային ոստիկանի գլխավորությամբ, որտեղ պարզվել է, որ օպերատիվ տեղեկությունը հավաստի է, իսկ մահացածը Սյունիքի մարզի բնակիչ 69-ամյա Վալերիկ Մ.-ն էր: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ համայնքային ոստիկանները պարզել են, որ նա բնակվել է միայնակ, ունեցել է «Թոքաբորբ» ախտորոշմամբ հիվանդություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 16ից 17-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 142 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՄՅԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ

ԱՍՏՂԵՐԸ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ, ԲԱՅՑ ՉԵՆ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ

Հեղափոխական շիշը եւ խաղաթղթեր. Հայկ Սարգսյանի հորոսկոպը

ՀՀ ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյան

Նիկոլ Փաշինյանի «հեղափոխական շիշը» բռնելով հայտնի դարձած Հայկ Սարգսյանի համար ծանր տարի էր: Ներկուսակցական բախումներ, անվստահություն, Նիկոլ Փաշինյանի մոտ նախկին վստահության կորուստ, բիզնես հաջողություններ կասեցում կամ անվանափոխում: Կապիկի տարում ծնված Հայկ Սարգսյանը անցնող տարում կարողացավ մի բանի հասնել. հանրային ընկալում ձեւավորել, որ Փաշինյանի վստահելին չէ, ուստի կարող է նաեւ այլ թիմերում դիրքավորվել: Աստղերը հուշում են, որ 2026-ին առավել լուրջ դժվարություններ են առաջ գալու եւ Ալեն Սիմոնյանի դեմ սկսած ու կուսակցական նկատողություն ստանալով ավարտված ներկուսակցական պայքարը կշարունակվի, բայց առաջվա ազդեցությունը չկա: Տիգրան Ավինյանի դեմ եղբայրական արշավն էլ հաջողությամբ չի պսակվելու, եւ ո՛չ Հայկ Սարգսյանը, ո՛չ Նաիրի Սարգսյանը չեն կարողանալու դառնալ ՔՊ-ի Երեւանի քաղաքապետի հաջորդ թեկնածուն:

0.24 մգ թմրանյութի անցյալ, մշուշոտ ապագա. Արթուր Հովհաննիսյանի աստիրիկ թռիչքը. *ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյան*

ՔՊ խմբակցության տխրահռչակ քարտուղար, 0.24 մգ դեղնականաչավուն անցյալով հայտնի Արթուր Հովհաննիսյանը արդեն զգում է, որ առաջվա ազդեցությունն ու պահանջարկը չի վայելում կուսակցության ներսում: Թմրամոլության թեման կրկնակոխ հետեւում է Արթուր Հովհաննիսյանին, որը 2025 թվականն ամփոփում է ակնհայտ կորուստներով: Նախկինում վարձով բնակվողը աճնական բարեկեցության հարցում, իհարկե, ունի «խարբերդյան» հաջողություններ, բայց ապագան մշուշոտ է: Աստղերը հուշում են թմրանյութերից հեռու մնալ, ականջ ու լեզու կտրելու սպառնալիքներն էլ հնչեցնելուց առաջ աշխատեցնել նաեւ ուղեղը՝ ոչ միայն լեզուն:

Շքեղ դաչա, Փոստի միլիոններ եւ մշուշոտ ապագա. 3 կուսակցություն փոխածի աստղագուշակը. *ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյան*

Հարազատ քավորին դավաճանելու գնով իշխանական պատգամավորի մանդատ ստացած, հետո այդ մանդատը իր համար ապահոված Ալեն Սիմոնյանին դավաճանած ու նրա դեմ կուսակցական «գործ տալու» իմիջ ստեղծած Հայկ Կոնջորյանի համար անցնող տարին քաղաքական իմաստով նույն ծառայամտության շրջանակներում էր, սակայն անձնական կյանքում հաջողությունները հետեւում են մեկը մյուսին: Երկրի թիվ մեկ փոստատար ընկերության՝ «Հայփոստի» մի քանի միլիոն դրամ աշխատավարձ ստացող նրա տնօրեն տիկինը ապահովում է ապագայի պայծառությունը: Նրանք արդեն ունեն շքեղ ամառանոց Առինջում՝ գնված շուկայականից էժան գնով:

Ճագարի տարում ծնված Հայկ Կոնջորյանը 2026 է մտնում մշուշոտ ապագով, քանի որ նրա ճարտար լեզուն էլ չի օգնում. այնպիսի կանայք եւ տղաներ են արդեն հավաքվել ՔՊ-ի շուրջ, որ «Լուսավոր Հայաստանի» կողմից օգտագործված կոնջորյանական մեթոդները արդեն արդիական չեն: Իսկ մինչ այդ էլ ՀԺԱՄ կուսակցությունում իր կարիերան կառուցող Կոնջորյանը նաեւ ՔՊ-ում չունի առաջվա գնահատականը:

Կանեփից մինչեւ երկնաքերեր. Ավինյանի բիզնես թռիչքները. *Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյան*

Արտադրական կանեփի նախագծով հայտնի փոխվարչապետը, հիմա ամենահին մայրաքաղաք Երեւանի քաղաքապետն է, շարունակում է սրընթաց հարստանալ եւ հարստացնել մայրաքաղաքը անճոռնի բարձրահարկերով: Օձի տարում ծնված Տիգրան Ավինյանի համար անցնող տարին տուրբուլենտային էր. նախ սկսվեց անորոշությամբ, քանի որ Նիկոլ Փաշինյանը խռովել էր եւ անգամ չէր բարեւում իրեն: Մի կերպ դա հարթեց, ապա սկսվեցին հրդեհներ, ծառահատումների խայտառակ օպերացիաներ… Ավինյանի հաղթարշավը, սակայն, շարունակվում է: Նա, սեղմելով իր դեմ բարձրացած ներկուսակցական բունտը, առաջ է գնում դեպի 2026: Դղյակներ, բիզնեսներ, առանձնատներ, ահռելի մեծ թվով շոշափելի եւ օնլայն փողեր... Այս թեմաները եւս կրնկակոխ հետապնդում են Տիգրան Ավինյանին: Աստղերը հուշում են ձկներին գիտակցել, թե ինչ է չափը եւ ստոպ անելու հմտություններ սովորել: Քրեական բարքերով առաջ շարժվելը, քաղաքապետարանի աշխատանքի տարրական կառավարումը ձախողած, ամիսներով քաղաքացիների նամակներին չպատասխանող կառույցի ղեկավարումը 2026-ին շուռ կգա ՔՊ-ի դեմ՝ քվեների տեսքով:

ՀՀ երկրորդ նախագահ *Ռոբերտ Քոչարյան*

Անցնող տարում պայքարը մեծ էր Ձեր դեմ եւ իշխանության եւ ընդդիմության կողմից: Թեեւ Նիկոլ Փաշինյանի իշխանության դեմ համակարգային պայքար տանող եզակի անհատներից եք, բայց անհասկացվածությունը շարունակում է ուղեկցել Ձեզ: 2025-ը շարունակվող, թարմացվող եւ վերաթարմացվող քրեահրավական տարի էր, որը խոստանում է առավել սրվել 2026-ին՝ ընտրություններին ընդառաջ: Թարմացրեք Ձեր թիմը, խմբագրեք ոչ միայն Ձեր խոսքերը, այլեւ մարդկանց, ում հետ ճանապարհ պիտի անցնեք: Աստղերը հուշում են, որ 2021-ի ընտրական սպասելիքները 2026-ին չեն արդարանա, բայց եւ հաջողություն կունենաք, եթե սթափությունը հաղթի ներթիմային խարդավանքներին, որոնք հյուսվում են թիմում տարեց դերակատարների կողմից: Ձիու տարում ծնված քաղաքական գործիչների համար 2026-ը սպասումների եւ պոտենցիալ ձեռքբերումների տարի կլինի, եթե ճիշտ ձեւակերպվեն սպասելիքներն ու հանրային դաշտում քվե տվողի հետ աշխատանքը:

ՀՀ առաջին նախագահ *Լեւոն Տեր-Պետրոսյան*

Աքլորների համար նահանջ տարի էր. հիմնադիր նախագահի բարձունքն ու գիտնականի իմիջը Նիկոլ Փաշինյանի կնոջ կողմից մի գրառմամբ փորձ արվեց հողի հավասարեցնել: 2025-ը այդ իմաստով տհաճ անակնկալների, իշխանական թիրախավորումների եւ անպտուղ գործունեության տարի կարելի է համարել: 2026-ին ընդառաջ անհրաժեշտ է փոխել հռետորաբանությունը, թիմում նոր, թարմ դեմքեր ներգրավել, ճիշտ մարդկանց հետ բանակցել ու համագործակցության պլաններ կազմել: Աստղերը հուշում են, որ խոշոր եւ կարող ուժերի հետ միավորվել, ներդնել ձեր մտավոր բացառիկ պոտենցիալը, որպեսզի քաղաքական լուսանցքում չհայտնվեք:

Նահանջ տարվա ավարտին՝ նոր աստղաբույլի որոնում. Սերժ Սարգսյանի աստղագուշակը. *ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյան*

8 տարի առաջ ունեցած կարգավիճակը հիմա շատ բան է փոխել ձեր կյանքում ինչպես առօրեական, այնպես էլ շրջապատող աստղաբույլի իմաստով: 2025-ը նահանջ տարի էր Ձեզ համար. թիմակիցների շարունակ կորուստներ, քաղաքական անհասկացվածություն, բայց ադեկվատ հանրույթի կողմից՝ նոստալգիա եւ համեմատություններ, որոնք խոսում են միայն Ձեր օգտին: Աստղերը հուշում են քաղաքական դիրքորոշում ձեւավորել, թիմին ուղղորդել իրատեսական պլանների հետեւից, այլ ոչ թե տարբեր ՔԿՀ-ներ: 2026-ը այս իմաստով կարող է նոր իմպուլս հաղորդել, եթե անցնող տարիների իշխանական եւ ընդդիմադիր սխալներից հետեւություններ անեք:

Քարեկեցությունից՝ բարիկաղներ. ձիու տարում ծնված առաջնորդի փորձությունը. *Մեր ֆեյսով շարժման առաջնորդ Նարեկ Կարապետյան*

Կյանքի բերումով քաղաքական գործիչ դարձած Նարեկ Կարապետյանի համար 2025-ը շոկային տարի էր: Բարեկեցիկ կյանքը, վայելքները, բարիք ստեղծելու ամենօրյա ջանքերը փոխարինվեցին դաժան պայքարի՝ լինելիության, շրջապատի պահպանության, թասիբի, նամուսի եւ այլ արժեքների պահպանման համար մարտահրավերային: Աստղերը հուշում են շատ կարդալ քաղաքական գրքեր այս ընթացքում, շփվել տարբեր հայացքներ ու մտածողություն ունեցող քաղաքական գործիչների հետ, սերտել նրանց լավագույն փորձը՝ 2026-ի մարտահրավերներին դիմակայելու համար: Այսօրվա շրջապատը այդ իմաստով խոստումնալից չէ. կատարողների փոխարեն նախաձեռնող թիմակիցներ փնտրեք, որ Նիկոլ Փաշինյանի կառավարման սխալները չկրկնեք: Ձիու տարում ծնված հանպատրաստի առաջնորդների համար մյուս տարին կարող է բարեբեր լինել, եթե իշխանական սադրանքներին չտրվեք եւ փորձառու կերպարներով շրջապատվեք: Միշտ չէ, որ փողը հարց կարող է լուծել:

Քարեգործությունից դեղի դատժամիջոց. փողը միշտ չէ, որ հարց է լուծում. 2026-ի աստղագուշակ *Սամվել Կարապետյան - «Տաշիր» ընկերությունների խորհրդի նախագահ, ազգային բարերար*

Հայաստանում՝ միայն կառուցած, բարիք ստեղծած, Արցախում բարեգործություն իրականացրած մեծ հայ, որը իր արտաբերած 1 նախադասության համար բանտում է մոտ 5 ամիս: 2025 թվականը ռուսաստանյակ բարերար Սամվել Կարապետյանի համար գլխիվայր շրջված իրականության տարի էր. մոսկովյան ու հայկական ընտանեկան ջերմությամբ ողջ աշխարհում ազատ շրջող գործարարը հանդգնեց կանգնել Հայ առաքելական եկեղեցու կողքին եւ հայտնվեց ԱԱԾ մեկուսարանում՝ կտրված աշխարհի իրականությունից: Սա նշանակում է, որ կամ ինչ որ հաշվարկներ ճիշտ չէին արվել, կամ նրան ձեռնտու էր կալանավայրում հիմա հայտնվելը, քանի որ անհնար էր պատկերացնել, որ միապետություն դարձած Հայաստանում կարող է որեւէ մեկը Նիկոլ Փաշինյանի քաղաքական քմահաճույքներին հակառակվել եւ մնալ անպատիժ: Այս առումով 2025 թվականին գործած սխալներից հետեւություններ անելու տարի պետք է լինի 2026-ը: Աստղերը Առյուծ Սամվել Կարապետյանին հուշում են լինել առավել շրջահայաց, ուղիներ որոնել՝ դուրս գալու կանալավայրից եւ մասնակցելու կայանալիք ընտրություններին՝ անձամբ զբաղվելով կազմակերպչական հարցերով: Հարուստ լինելը, միլիարդատեր դառնալն ու մնալը դեռ քաղաքականության մեջ հաջողության հասնելու գրավական չեն, քանի դեռ չկան պրոֆեսիոնալ թիմակիցներ կողքիդ: Օձի տարում ծնված հայ բարերարների համար 2026-ը կարող է շրջադարձային լինել, եթե ճիշտ հաշվարկ արվի եւ ճիշտ դերակատարներ ընտրվեն՝ համագործակցելու եւ փոխհարաբերվելու համար:

Իրավունքներից դեղի քվեներ. բարդ անցում. Թաքոյանի աստղագուշակը *ՀՀ Մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաքոյան*

Ընդդիմադիր գործիչ, որը չի հասկացվում ո՛չ իշխանության, ո՛չ ընդդիմության կողմից: Նախկին եւ ներկա իշխանություններին թիրախավորելուց զատ՝ 2025 թվականին Դուք աչի եք ընկել ստվերային կառուցակարգերի ձեւավորմամբ եւ շանս ունեք հաջողությունների, եթե խոշորանաք, միավորվեք առավել կարող ուժերի հետ, որոնք կարող են ձայներ հավաքել, ընտրատեղամասում ձայներ պահել: Աստղերը հուշում են ամբիցիաները մի կողմ դնել, առաջնորդվել իրատեսական հաշվարկներով եւ հնարավորություններով: Աղեղնավոր նախկին օմբուդսմենների համար 2026-ը կարող է բարենորոգ տարի լինել, եթե եսակենտրոնությունն իր տեղը զիջի պրագմատիզմին:

2026-ին ընդառաջ՝ հումորային շարք, որը 15 տարի «Ժողովուրդ» օրաթերթը պահում է որպես անխախտ ավանդույթ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 25 պատահար, 33 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»

ՆՈՐ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

«Արդշինբանկը» հայտարարում է նոր գործիքակազմ գործարկելու մասին իր sme.ardshinbank.am հարթակում՝ առաջարկելով փոքր եւ միջին ձեռնարկություններին առավել հարմար, արագ եւ հասանելի ճանապարհ անհրաժեշտ ֆինանսավորումը ստանալու համար:

sme.ardshinbank.am հարթակն այսօր հնարավորություն է տալիս բավարարել բիզնեսի բնականոն գործունեությունն ապահովող բոլոր գործիքները: Առանց բանկ այցելելու կարելի է մի քանի քայլով հաշիվ բացել, քարտ պատվիրել եւ գրանցել pos տերմինալ՝ ձեր բիզնեսի ամենօրյա վճարումների համար:

Նոր թվային գործիքը հնարավորություն է տալիս վարկային հայտը ներկայացնել ամբողջությամբ օնլայն՝ առանց բանկ այցելելու: Լուծումը նախատեսված է աջակցելու ձեռնարկություններին իրենց գործունեության ընդլայնման, շրջանառու միջոցների համալրման, հիմնական միջոցների ձեռքբերման, ընթացիկ կարիքների ֆինանսավորման, ինչպես նաեւ պարտավորությունների վերաֆինանսավորման գործընթացում:

Առաջարկը նախատեսված է ՀՀ տարածքում գրանցված ՓՄՁ ոլորտում գործունեություն իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, ինչպես նաեւ անհատ ձեռնարկատերերի համար:

Վարկի հիմնական պայմաններն են.

- Գումար՝ 1-15 մլն դրամ կամ 2 000-50 000 ԱՄՆ դոլար / եվրո
- Ժամկետ՝ 12-60 ամիս
- Արտոնյալ ժամանակահատված (մայր գումարի մասով)՝ մինչեւ 12 ամիս ներառյալ
- Վճար չի սահմանվում դիմումի դիտարկման եւ վարկի տրամադրման համար
- Տարեկան անվանական տոկոսադրույքը՝ ՀՀ դրամ՝ 16%, ԱՄՆ դոլար՝ 14%, Եվրո՝ 12.5%, փաստացի տոկոսադրույքը՝ 13.26%-17.36%
- Վարկի մարման կարգ՝ անուիտետային

Ինչպես ներկայացնել ավտոմատ վարկի հայտը. քայլերը շատ պարզ են. անհրաժեշտ է պարզապես այցելել sme.ardshinbank.am, գրանցվել, ընտրել «Ավտոմատ վարկ» բաժինը, նշել գումարը, արժույթը, գործունեության ոլորտը եւ լրացնել անհրաժեշտ տվյալները: Նշենք, որ «Արդշինբանկը» տրամադրում է նաեւ բիզնես վարկերի վերաֆինանսավորում՝ ավելի շահավետ պայմաններով գործող այլ բանկերից կամ վարկային կազմակերպություններից բիզնես վարկերն «Արդշինբանկ» տեղափոխելու դեպքում:

Ինչպես նշեցին բանկում. «Մեր նպատակն է ապահովել ժամանակակից եւ հարմարավետ ֆինանսական գործիքներ ձեռնարկատերերի համար: Բիզնես վարկերի օնլայն հարթակի նոր գործիքների գործարկումը նպատակ ունի բարձրացնել բանկային ծառայությունների մատչելիությունը եւ խթանել ՓՄՁ ոլորտի կայուն զարգացումը Հայաստանում: Վստահ ենք, որ մեր հաճախորդները բարձր կգնահատեն այս նոր լուծումը»:

ԽՆԴԻՐՆԵՐԻՑ՝ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԺՈՂՈՎՈՒՐԴ»-Ի ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ամփոփելով անցնող 2025 թվականի գործունեության արդյունքները՝ «Ժողովուրդ» օրաթերթն իր ընթերցողներին է ներկայացնում մի քանի հարցեր, որոնք մասնակի կամ ամբողջությամբ լուծվել են օրաթերթի հրապարակումների շնորհիվ:

Դրանցից նշանակալի էին մեր հետաքննությունների ու հրապարակումների արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի արձագանքները՝ «Ժողովուրդ»-ի կողմից բացահայտած մի շարք փաստերի վերաբերյալ:

Նախարար կա, դասագիրք չկա. կրթական տարվա խայտառակ սկիզբ սեպտեմբերի 1-ին. «Ժողովուրդ»

Նշված վերտառությամբ հոդվածի հրապարակումից հետո ArmLur.am-ը դիմել էր ԿԿՀ՝ նախարարի վարքը քննության առնելու համար. Հանձնաժողովը համալիր ուսումնասիրությունից հետո մերժել է վարույթ հարուցելու դիմումը, սակայն կատարել ուսումնասիրություն եւ ընդգծել նախարարի ոչ վայելուչ պահվածքը:

7 բնակավայրերի համայնքապետը միլիոնատեր է. ինչ ունեցվածք է հայտարարագրել Նորայր Սարգսյանը. «Ժողովուրդ»

Նշված հրապարակումը եւ դրա հետքերով՝ հոդվածում նկատի առնված հայտարարագիրը ուսումնասիրելուց հետո Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ավարտելով ուսումնասիրությունը, անհամապատասխանությունների բնույթը հաշվի առնելով՝ կրկին առաջարկել է

հայտարարագրում ուղղումներ իրականացնել:

Ինչ ունեցվածք ունի Սամվել Վարդանյանի գործը քննող դատավոր Ժորա Չիչոյանը

Նշված հրապարակումից հետո դատավոր Ժորա Չիչոյանից արձանագրված առերեւույթ խախտումների վերաբերյալ ԿԿՀ-ն որոշել է պարզաբանում հայցել: Պարզաբանումների եւ հիմնավորող փաստաթղթերի ներկայացման արդյունքում Հանձնաժողովի կասկածները փարատվել են եւ ԿԿՀ-ն որոշել է ավարտել ստուգումը:

Քննիչ Յուրիկ Սարգսյանը հայտարարագիրը թերի է լրացրել. «Ժողովուրդ»

Նշված վերտառությամբ հոդվածի հրապարակումից հետո Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ուսումնասիրել է Քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության՝ խոշտանգումների եւ պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչության քննիչ Յուրիկ Սարգսյանի հայտարարագրերը, եւ դրա մասին մեր հոդվածում առկա անհամապատասխանությունների ուսումնասիրությունները:

Քննության արդյունքում ԿԿՀ-ն որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով անհամապատասխանությունների բնույթը:

1 տարում 2 բնակարան՝ 85 մլն դրամով. որտեղից փոխքաղաքապետին նման գումարներ

Այս հոդվածի հրապարակումից որոշ ժամանակ անց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ուսումնասիրել է Երեւանի փոխքաղաքապետ Լեւոն Հովհաննիսյանի լրացրած հայտարարագիրն ու նրա ընտանիքի անդամ Թամարա Ղարիբյանի հայտարարագիրը:

Հանձնաժողովն ուսումնասիրությունից հետո առաջարկել է ԿԿՀ ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում: Այսինքն՝ առաջարկել է փոխքաղաքապետին փոփոխություններ անել հայտարարագրում:

Հ. Գ. Նշենք, որ վերը նշվածներով չեն սահմանափակվում «Ժողովուրդ» օրաթերթի եւ ArmLur.am-ի խմբագրության ջեռուցումներն ու ամբողջ տարվա ընթացքում աշխատանքի արդյունքում բաղված պտուղները:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ». ԲԲԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2026թ.-ի հունվարի 12-ին՝ ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով:

Թիվ 82 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն 120.1գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 113.6գր), որից 6.8 գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝ 335.900 ՀՀ դրամ,78.1գր ընդհանուր քաշով ոսկյա զարդեր(զուտ քաշը 76 գր) 585 հարգի՝2.292.500 ՀՀ դրամ, 17.8 գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ(զուտ քաշը 13.8գր) 585 հարգի՝ 416.200 ՀՀ դրամ, 17.4գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 17գր) 500 հարգի՝438.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 3.482.900 ՀՀ դրամ: Թիվ 83 լոտ՝ ոսկյա ջարդոն 41.7գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 36.6գր), որից 11.9 գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 7.5գր) 500 հարգի՝ 193.400 ՀՀ դրամ, 5.1գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝251.900 ՀՀ դրամ, 24.7գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 24գր) 585 հարգի՝723.900 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.169.200 ՀՀ դրամ: Թիվ 84 լոտ՝ ոսկյա զարդեր 42.6գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 41.7գր), որից 36.4գր ընդհանուր քաշով ոսկյա զարդեր(զուտ քաշը 35.5գր) 585 հարգի՝ 1.070.800 ՀՀ դրամ, 6.2գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ 958 հարգի՝306.200 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.377.000 ՀՀ դրամ: Թիվ 85 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն 22.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 21.3գր), որից 5.2գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ 958 հարգի՝ 256.800 ՀՀ դրամ, 4.7գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ 585 հարգի՝ 141.700 ՀՀ դրամ, 7.9 գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 6.9գր) 585 հարգի՝ 208.100 ՀՀ դրամ, 5.1գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 4.5գր) 500 հարգի՝ 116.100 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 722.700 ՀՀ դրամ: Թիվ 86 լոտ՝ոսկյա զարդեր 27.4գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 25գր), որից 21գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ(զուտ քաշը 19.6գր) 500 հարգի՝ 505.300 ՀՀ դրամ, 6.4գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ(զուտ քաշը 5.4գր) 585 հարգի՝ 162.900 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 668.200 ՀՀ դրամ: Թիվ 87 լոտ՝ ոսկյա զարդ 26.4գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 26գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 784.300 ՀՀ դրամ: Թիվ 88 լոտ՝ոսկյա զարդեր եւ ջարդոն 18.4 գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 17.2գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը 443.400 ՀՀ դրամ: Թիվ 89 լոտ՝ոսկյա ջարդոն 15.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 14.7գր), որից 3.9գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 3.8գր) 585 հարգի՝114.600 ՀՀ դրամ, 8գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 7.5գր) 500 հարգի՝ 193.300 ՀՀ դրամ, 3.4գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 900 հարգի՝ 157.800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 465.700 ՀՀ դրամ: Թիվ 90 լոտ՝ ոսկյա զարդեր 13.4գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 13.2գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 398.200 ՀՀ դրամ: Թիվ 91 լոտ՝ ոսկյա ջարդոն 10.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 9.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 286.500 ՀՀ դրամ: Թիվ 92 լոտ՝ ոսկյա ջարդոն 11.7գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 10.7գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 322.700 ՀՀ դրամ: Թիվ 93 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն 6.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 5.5գր), որից 4.8գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ եւ ջարդոն(զուտ քաշը 3.7գր) 585 հարգի՝111.600 ՀՀ դրամ, 2.1գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 1.8գր) 500 հարգի՝46.400 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 158.000 ՀՀ դրամ: Թիվ 94 լոտ՝ոսկյա զարդ 2.5գր ընդհանուր քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 75.400 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ.՝ +374 43 00 42 27

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԻՆՉ ԴԻՏԵԼ ԱՄԱՆՈՐԻՆ

ՏՈՆԱԿԱՆ ՖԻԼՄԵՐ ՈՐՈՆՔ ԿՄԻԱՎՈՐԵՆ ՈՂՋ ԸՆՏԱՆԻՔԸ

Տարվա վերջին օրերը լավագույն առիթն են դանդաղելու, առօրյա աղմուկից կտրվելու եւ վերադառնալու սպասված հանգստին ու ֆիլմերին, որոնք վաղուց ծանոթ են, սակայն ամեն անգամ դիտելիս նոր զգացողություններ են թողնում: Ամանորյա օրերին հատկապես հաճելի է դիտել այն ֆիլմերը, որոնք միավորում են հումորը, ձմեռային կախարդանքն ու նոստալգիան:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է ամանորյա ֆիլմերի ընտրանի, որոնք տարիներ շարունակ ուղեկցում են տոնական օրերին՝դառնալով շատ ընտանիքների «ավանդույթի» մի մասը:

Ամանորի խորհրդանիշ դարձած ֆիլմը՝ «Տանը մենակը» (Home Alone)

«Տանը մենակը» վաղուց դադարել է պարզապես ընտանեկան կատակերգություն լինելուց: Ֆիլմի ամենահիշվող դրվագները՝Քեւինի հնարամիտ թակարդները, նրա ինքնուրույն «մեծանալու» փորձերը, ինչպես նաեւ քաղաքի ձմեռային տեսարաններն ու ամանորյա մթնոլորտը, մշտապես առաջ են բերում նոստալգիկ զգացողություններ: Ֆիլմը դիտվում է նույն հաճույքով անգամ տասնյակ դիտումներից հետո:

Ի դեպ, օրեր առաջ համացանցում տարածվեցին ֆիլմի հայտնի տան վերանորոգված տեսարանները, որոնք դժգոհություն էին առաջացրել բազմաթիվ երկրպագուների շրջանում. նրանց կարծիքով վերանորոգման արդյունքում կորել էր 90-ականների այն ջերմ ու հարազատ մթնոլորտը, որն այս տունը տարիների ընթացքում դարձրել էր ֆիլմի անբաժան այցեքարտերից մեկը:

Մարդկային զգացմունքների խճանկար «Իսկական սեր»

Ամանորյա ամենագեղեցիկ ֆիլմերից մեկը «Իսկական սերն» է:

Ֆիլմը կառուցված է առանձին պատմությունների վրա, որոնք սկզբում թվում են անկախ, սակայն աստիճանաբար խաչվում են: Ֆիլմի ազդեցիկությունը մանր դրվագների մեջ է. օդանավակայանի հանդիպումները, չասված խոսքերը, անհարմար ժեստերը, որոնք երբեմն ծիծաղելի են, երբեմն՝ցավոտ:

Միմյանց խաչվող պարզ ու բարդ ճակատագրերը միավորվում են մեկ գաղափարի շուրջ՝ամանորյա հրաշքի: Ֆիլմը հիշեցնում է, որ տարվա վերջում մարդիկ դառնում են մի փոքր ավելի անկեղծ, եւ որ սա լավագույն ժամանակն է սիրելի մարդկանց ասելու, թե որքան կարեւոր են նրանք մեզ համար:

Հայկական տոնական կոլորիտ. «Մեր բակը»

Հայկական իրականության մեջ ամանորյա օրերը դժվար է պատկերացնել առանց «Մեր բակը» ֆիլմի հումորի ու մտերմիկ մթնոլորտի: Այն տարիներ շարունակ մնացել է ընտանեկան դիտումների սիրելի ընտրություն՝հիշեցնելով 2000-ականների սկիզբը, նոր դարաշրջան մտնող Հայաստանը, պարզ ու մաքուր սրտերով մարդկանց, որոնց կերպարները շատերին հարազատ են:

Ձմեռային հեքիաթներ՝ ամբողջ ընտանիքի համար. «Հարրի Փոթեր», «Նարնիայի քրոնիկները»

Այս ֆիլմաշարերը հատկապես ամանորյա օրերին ունեն առանձնահատուկ դիտողական գրավչություն: «Հարրի Փոթերում» Հոգվարթսի ձմեռային տեսարանները, շքեղ դահլիճներն ու ջերմ լույսով լուսավորված սրահները, ընկերների միջեւ ձեւավորվող հարաբերությունները, պարահանդեսները ստեղծում են կախարդական մի աշխարհ, որտեղ ամեն բան թվում է հնարավոր: Ամանորյա օրերը հարմար առիթ են ֆիլմաշարի բոլոր ութ մասերը կրկին դիտելու՝ սպասելով նաեւ 2026 թվականին նախատեսված «Հարրի Փոթեր» սերիալի թողարկմանը:

«Նարնիայի քրոնիկներում» ձմեռը եւս առանձնահատուկ աշխարհ է՝ ձյունե թագավորություն, որտեղ իշխում է Սպիտակ Վհուկը, իսկ յուրաքանչյուր ճանապարհորդություն վերածվում է առանձին հեքիաթի: Երկու ֆիլմաշարերն էլ չեն սահմանափակվում ֆանտաստիկ ժանրով. դրանք ներկայացնում են ընկերության, անձնազոհության, հավատարմության եւ այլ կարեւոր արժեքներ:

Խորհրդային դասականների նոստալգիան. «Ճակատագրի հեգնանք կամ բաղնիքդ անուշ»

Խորհրդային ֆիլմերը եւս իրենց առանձնահատուկ տեղն ունեն տոնական ֆիլմաշարում: «Ճակատագրի հեգնանք կամ բաղնիքդ անուշ» ֆիլմի ցուցադրությունը վաղուց դարձել է ավանդույթ՝բերելով ծանոթ միջավայր, հաճելի նոստալգիա եւ ջերմ հիշողություններ: Հիշվող են ոչ միայն կերպարները, այլեւ երկխոսությունները, երաժշտությունն ու հումորը, որոնք տարիներ շարունակ մնացել են հարազատ:

Այս շարքին միանում է նաեւ **«Ծառայողական սիրավեպը»**, որի հումորը,

հետաքրքիր սյուժեն այնքան սիրելի են շատ կինոսերների համար, որ ֆիլմի մի շարք արտահայտություններ կարծես թեւավոր խոսքեր են դարձել:

Այս ֆիլմերը դասական դարձած օրինակներ են, որոնցից գոնե մեկը ամանորյա օրերին դիտվում է յուրաքանչյուր ընտանիքում: Կարեւորը, իհարկե, այն մարդիկ են, որոնց հետ կիսում եք այդ պահերը: Թող տոնական օրերն անցնեն ջերմ ու հաճելի մթնոլորտում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՂԹԱՆԱԿ

Դեկտեմբերի 18-ի գիշերը Մոսկվայում կայացած ACBJJ 20 մրցաշարի գլխավոր իրադարձության շրջանակում գոտեմարտել են UFC-ի թեթեւ քաշային կարգի մարտիկ Արման Ծառուկյանը եւ թեթեւագույն քաշային կարգում ACA Գրան պրիի հաղթող Մեհդի Բայդուլաեւը:

Դիմակայությունն ավարտվել է Արմանի հաղթանակով. նա հաջողությամբ կիրառել է խեղդող հնարքը՝ նվաճելով ACBJJ-ի չեմպիոնական գոտին:

Ծառուկյանը վերջին անգամ մրցասպարեզ էր դուրս եկել սույն թվականի նոյեմբերին՝ Դոհայում (Կատար) կայացած UFC Fight Night 265 մրցաշարի շրջանակում՝ մենամարտելով Դեն Հուկերի դեմ: Այդ պայքարում եւս Արմանը հաղթանակի էր հասել երկրորդ ռաունդում կիրառած խեղդող հնարքով: Նրա ակտիվում գրանցված է 23 հաղթանակ եւ 3 պարտություն:

Բայդուլաեւն իր նախորդ մենամարտն անցկացրել էր հուլիսին՝ ACA 189 մրցաշարում՝ ուժերը չափելով Մարկոս Ռոդրիգեսի հետ: Այդ մենամարտում Մեհդին հաղթել էր մրցավարների միաձայն որոշմամբ:

ԱՎԱՐՏԵԼ Է ԿԱՐԻԵՐԱՆ

Շվեդ կենտրոնական պաշտպան Օսկար Վալինը, ով նախկինում հանդես է եկել անգլիական «Փիթերբորո Յունայթեդի» կազմում, հայտարարել է 24 տարեկանում կարիերան ավարտելու մասին:

«Պարզապես ֆուտբոլիստ լինել ինձ այլեւս հետաքրքիր չէ: Ընդհանուր առմամբ, ես կարող էի շարունակել խաղալ, բայց հիմա հասկանում եմ, որ կորցրել եմ դա անելու ցանկությունը: Կարիերան շարունակելու համար Շվեդիա վերադառնալը նույնպես ինձ չի հետաքրքրում: Զգում եմ, որ ուզում եմ ժամանակս նվիրել այն ամենին, ինչը զոհաբերել եմ վերջին 15 տարիների ընթացքում ֆուտբոլի պատճառով: Այո՛, ես դադարեցրել եմ ելույթներս:

Ես կարիերաս ավարտեցի 24 տարեկանում, բայց կարող էի դա անել նաեւ 22-ում կամ 27-ում»,- Վալինի խոսքերը մեջբերում է BBC-ն:

ՖՈՒՏԲՈԼԻՍՏԸ՝ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԶՈՀ

Էկվադորի ազգային հավաքականի պաշտպան Մարիո Պինեյդան 33 տարեկան հասակում դարձել է զինված հարձակման զոհ, հայտնում է extra.ec-ը:

Աղբյուրի փոխանցմամբ, ֆուտբոլիստը գնումներ էր կատարում մսագործի խանութում, երբ նրան անակնկալի են բերել զինված անձինք, որոնք առանց նախազգուշացման կրակ են բացել: Հարձակման հետեւանքով վիրավորվել է նաեւ խաղացողի մայրը, իսկ նրա ընկերուհին եւս սպանվել է:

Ոստիկանությունը չի բացառում, որ տեղի ունեցածը կարող է լինել նպատակային սպանություն:

Մահվան պահին Մարիո Պինեյդան «Բարսելոնա Գուայակիլի» ֆուտբոլիստ էր, որտեղ անցկացրել է իր պրոֆեսիոնալ կարիերայի մեծ մասը: Նա հանդես է եկել նաեւ տեղական «Ինդեպենդիենտե», «Էլ Նասիոնալ» եւ բրազիլական «Ֆլումինենսե» ակումբներում:

● *Դեկտեմբերի 21, 22-ին՝16:00-ին, Ա. Բաբաջանյան համերգասրահում տեղի կունենա «Ամանոր 7 սարից այն կողմ» տոնական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 5.000-7.000 դրամ:*

Քնար Մանուկյան

Քչերն են նկատում, որ Նոր տարին գալիս է խմբագրելու անցնող տարվա սխալները, լրացնելու բացթողումները, հաղթահարելու բաց թողած մարտահրավերները:

Թող գալիք տարին լինի միավորման ու համատեղ պայքարի խոսափողը:

Շնորհավո՛ր Ամանոր:

Պետրոս Թովմասյան

2026 թվականը թող իր հետ բերի ուժ, եռանդ ու խաղաղություն: Թող այս տարի իրականանան բոլորիս նպատակները:

2026-ը լինելու է հաջողության տարի:

Շնորհավո՛ր Ամանոր:

Սոնա Գրիգորյան

2026 թվականն արդեն խոստանում է աշխատանքային առումով թեժ լինել:

Թող որ եկող տարին լինի պայծառ ու «թեժ» օրերով լի նաեւ բոլորի անձնական կյանքում:

Էմմա Միքայելյան

Թող այս տարվա լուսաբացը գա խաղաղությամբ, զորությամբ ու հավատքով: Թող հայ Եկեղեցին, որպես մեր ժողովրդի անքակտելի լույս, շարունակի ամրացնել մեր ոգին՝ ինչպես գոյության հազարամյա հենասյուն: Թող Նոր տարին բերի հույս, բանակին՝ ուժ, ժողովրդին՝ իմաստություն, սրտերին՝ սեր եւ խաղաղություն:

Նանիկ Աղասյան

Ցանկանում եմ, որ 2026 թվականը լինի հույսի, հավատի, սիրո եւ նվիրումի տարի: Թող այս տարի Բաքվում գտնվող մեր բոլոր գերիները հայրենիք վերադառնան: Արցախահայության մի մասնիկն էլ լինելով՝ ուզում եմ, որ իմ հայրենակիցներն ապրեն, արարեն Հայաստանում՝ մայր հայրենիքում՝ չմոռանալով Արցախը, չմոռանալով, որ մենք ուժեղ ենք, մենք անկոտրում ենք, մենք կարող ենք....

Ի՜ գործ....

Սարգիս Սահակյան

Սրտանց շնորհավորում եմ բոլորիս գալիք Ամանորն ու Սուրբ ծնունդը, մաղթում եմ սեր, երջանկություն եւ ամենայն բարիք: Թող 2026-ը լինի միայն խաղաղության ու համերաշխության, ձեռքբերումների ու նվաճումների տարի:

Գրետա Սողոմոնյան

Թող Նոր տարին բացի նոր էջ՝ լի լույսով, խաղաղությամբ ու ջերմությամբ: Թող յուրաքանչյուր օր բերի լավ լուրեր, առողջություն, հաջողություն եւ սրտի հանգստություն: Թող իրականացվեն ձեր ամենագաղտնի ցանկությունները, իսկ դժվարությունները մնան անցյալում:

Շնորհավո՛ր
Նոր տարի:

Հովսեփ Հովսեփյան

Շնորհավո՛ր Նոր Տարի: Թող գալիք տարվա յուրաքանչյուր ամիս լինի պայծառ ու անմոռանալի: Թող հրաշքները տեղի ունենան ավելի հաճախ: Թող իրադարձությունները լինեն նշանակալից եւ գեղեցիկ, իսկ կյանքը՝ բարեկեցիկ եւ երջանիկ:

Հուրի Բաղդասարյան

Սիրելի՛ ընթերցող, ցանկանում եմ, որ հաջորդ տարին լինի արժանապատվության եւ հաղթանակների տարի: Թող որ «Ժողովուրդ»-ը միայն ազգային հաղթանակների, գիտական եւ մշակութային վերելքների ու սիրո մասին հայտնի ժողովրդին:

Շնորհավո՛ր Ամանոր
եւ Սուրբ Ծնունդ:

Շուշան Ասրյան

2026 թվականին թող լուծվեն նախորդ տարվա բոլոր խնդիրները, հաղթահարվեն բոլոր փորձությունները, լրացվեն բացերը, ուղղվեն սխալները, շտկվեն բոլոր բացթողումները, ներվեն բոլոր մեղքերը եւ բացվեն նախորդ տարվա փակ դռները:

Ալվարդ Կոշկակարյան

Գալիք 2026 թվականը թող իր հետ բերի ուժ, խոհեմություն եւ լավատեսություն՝ պայքարելու եւ կանգ չառնելու կյանքի անվերջանալի բարդ շղթայում: Եվ հիշեք՝ ձեր հեքիաթը դուք եք հյուսում, թող այն լցված լինի հրաշքներով:

Վահագն Մխիթարյան

Ցանկանում եմ, որ 2026 թվականին մարդիկ սկսեն ավելի հոգատար լինել կենդանիների նկատմամբ, սիրեն եւ խնամեն նրանց, բռնությունների չենթարկեն: Միայն դրանից հետո նրանք կսկսեն մարդկանց հանդեպ եւս հոգատար լինել:

Լիլիթ Դուրյան

Ցանկանում եմ, որ ապրենք միայն խաղաղ երկրում, որտեղ խաղաղ են ոչ միայն մեր երկրի սահմանները, այլեւ մեր մտքերը: Թող 2026-ը լինի գիտակցման, ներքին հավասարակշռության, սիրո, համերաշխության ու վստահ քայլերի տարի:

Ոսկան Սարգսյան

Մաղթում եմ, որ 2026 թվականին Հայաստանում, հայ ազգի մեջ ողջախոհություն տիրի, հավատանք գործերին, ոչ թե խոսքերին, ազգայինը, մարդկայինը գերադասենք ապազգայինից, եւ այդ պարագայում կլինեն նաեւ սպասված խաղաղությունն ու հաջողությունները:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.12.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*